Հավելված 1
ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի
2020 թվականի տարեկան հաշվետվության

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2020 ԹՎԱԿԱՆ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2020 թվականի գործունեության կատարողականի գնահատումն իրականացվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1. Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2019թ.	2020թ.
1	Դեղերի շրջանառություն	0	3.4
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0	0
3	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	0	0
4	Աշխատանքի իրավունք	0	3.0

Նախորդ հաշվետու տարում ցուցանիշը գնահատվել է «0», քանի որ Տեսչական մարմնի կողմից ստուգումներ չեն իրականացվել:

Հաշվետու տարում բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառներում ստուգումներ չեն իրականացվել, հետևաբար չափորոշիչը գնահատվում է «0» (փաստացի ստուգումներ սկսվել են, սակայն դեռևս չեն ավարտվել):

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

1.2 Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2019թ.	2020թ.
1	Դեղերի շրջանառություն	0	3.4
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0	0
3	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	0	0
4	Աշխատանքի իրավունք	0	5.3

Նախորդ հաշվետու տարում ցուցանիշը գնահատվել է «0», քանի որ Տեսչական մարմնի կողմից ստուգումներ չեն իրականացվել:

Հաշվետու տարում բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառներում ստուգումներ չեն իրականացվել, հետևաբար չափորոշիչը գնահատվում է «0» (փաստացի ստուգումներ սկսվել են, սակայն դեռևս չեն ավարտվել):

1.3 Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները[1].

Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման գործառույթներն իրականացվել են համապատասխան վարչության կադրային ներուժով՝ 8 աշխատող (առկա է 9 հաստիք): Ֆինանսական միջոցները կազմել են այդ աշխատողների աշխատավարձերն ու պարգևավճարները: Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

1.4 Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Տարվա ընթացքում իրականացվել է **63328** իրազեկման միջոցառում (2019թ.՝ **1686**): Ըստ վերահսկողության ոլորտների՝

[1] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

	Դեղերի շրջանառություն		Բժշկական օգնություն և սպասարկում		Բնակչության սանիտարահամաճ. անվտանգ. ապահովում		Աշխատանքի իրավունք	
	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020
Միջոցառումների թիվ	59	6267	135	2362	1109	28707	383	25992
Դասընթաց	21	0	19	0	17	0	52	0
Մշտադիտարկում	0	3087	0	1322	0	8712	0	9399
Ստուգայց	0	4542	0	303	0	6156	0	2416
Տնտեսավարող սուբյեկտների թիվ	769	5877	646	1205	800	18700	109	17993

Միջոցառումների թիվը ներառում է նաև Տեսչական մարմնի կողմից իրականացված այլ միջոցառումներ՝ իրազեկում տնտեսավարող սուբյեկտներին էլեկտրոնային հաղորդագրությունների, հեռախոսազանգերի միջոցով և այլն:

Միաժամանակ իրականացվել է՝

- ՀՀ սահմանը հատած 587885 անձանց տրամադրվել է ինքնամեկուսացման ծանուցագրեր, խորհրդատվություն,
- Թեժ գծով ստացված 2505 զանգերին խորհրդատվություն և պարզաբանում,
- 3 հոլովակի պատրաստում,
- 243 տեսանյութի նկարահանում,
- 1617 հրապարակում պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներն իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների միջոցով:

Տեսանյութերի և հոլովակների պատրաստումն ապահովվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի, Հ1-ի և Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ աշխատանքի արդյունքում:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից ֆինանսական լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել:

1.5 Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը[2].

Տարվա ընթացքում ներկայացվել է **43** առաջարկություն (2019թ.՝ **30** առաջարկություն): Միաժամանակ, նոր կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ իրավիճակի ընթացքում աշխատանքային կարգով բազմաթիվ առաջարկություններ են ներկայացվել պարետի որոշումների, գործունեության տարբեր տեսակների համար մշակվող անվտանգության կանոնների, մեթոդական ցուցումների և ներկայացված այլ նախագծերի վերաբերյալ:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2.1 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը.

«0»

<u>Մեկնաբանություն.</u> Տեսչական մարմնի կողմից հաշվետու տարում ըստ անհրաժեշտության ստուգումներ չեն իրականացվել:

2.2 Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ.

	ՈԼՈՐՏ	Ստուգումների ընդհանուր թիվ	Բարձր ռիսկ. ստուգոումների քանակ
1	Դեղերի շրջանառություն	64	64 (100 %)
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0	0
3	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	0	0

[2] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում կիսամյակը:

4	Աշխատանքի իրավունք	19	7 (36,8 %)

Նախորդ հաշվետու տարում ցուցանիշը գնահատվել է «0», քանի որ Տեսչական մարմնի կողմից ստուգումներ չեն իրականացվել:

Հաշվետու տարում բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառներում ստուգումներ չեն իրականացվել, հետևաբար չափորոշիչը գնահատվում է «0» (փաստացի ստուգումներ սկսվել են, սակայն դեռևս չեն ավարտվել):

2.3 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (օր)	
		2019թ.	2020թ.
1	Դեղերի շրջանառություն	0	12.5
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0	0
3	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	0	0
4	Աշխատանքի իրավունք	0	12.3

Նախորդ հաշվետու տարում ցուցանիշը գնահատվել է «0», քանի որ Տեսչական մարմնի կողմից ստուգումներ չեն իրականացվել:

Հաշվետու տարում բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառներում ստուգումներ չեն իրականացվել, հետևաբար չափորոշիչը գնահատվում է «0» (փաստացի ստուգումներ սկսվել են, սակայն դեռևս չեն ավարտվել):

2.4 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

«0»

<u>Մեկնաբանություն</u>. Տեսչական մարմնի կողմից հաշվետու տարում ըստ անհրաժեշտության ստուգումներ չեն իրականացվել:

2.5 Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Նշված չափանիշներին առնչվող բողոքներ չեն ստացվել:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը.

«0»

<u>Մեկնաբանություն.</u> Տեսչական մարմնի կողմից հաշվետու տարում ըստ անհրաժեշտության ստուգումներ չեն իրականացվել:

3.2 Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը[3] .

Չափորոշիչը կգնահատվի 2022թ.՝ 2 տարվա ստուգումների վերլուծությունների արդյունքում:

3.3 Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (մարդկային ռեսուրսներ)	
		2019թ.	2020թ.
1	Դեղերի շրջանառություն	0	2.1
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0	0
3	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	0	0
4	Աշխատանքի իրավունք	0	2.1

[3] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

Մեկ ստուգման համար ծախսված ֆինանսական միջոցներն են գործուղումների և ավտոմեքենաների բինզինի ծախսը, որը հնարավոր չի եղել հաշվարկել՝ ստուգումների գործընթացի վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի բացակայությամբ պայմանավորված:

Նախորդ հաշվետու տարում ցուցանիշը գնահատվել է «0», քանի որ Տեսչական մարմնի կողմից ստուգումներ չեն իրականացվել:

Հաշվետու տարում բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառներում ստուգումներ չեն իրականացվել, հետևաբար չափորոշիչը գնահատվում է «0» (փաստացի ստուգումներ սկսվել են, սակայն դեռևս չեն ավարտվել):

3.4 Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

Տեսչական մարմնի դեմ բերվել է 64 բողոք, որից 29 բողոք՝ Տեսչական մարմին, 35 բողոք՝ դատարան: Ըստ վերահսկման առանձին ոլորտների, պատկերը հետևյալն է.

Ոլորտներ	Բողոքների ընդհանուր թիվ		Այդ թվում՝			
			Տեսչական մարմին		Դատարան	
	2019	2020	2019	2020	2019	2020
Դեղերի շրջանառություն	18	21	4	4	14	17
Բժշկական օգնություն և սպասարկում	2	8	1	5	1	3
Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	40	23	20	15	20	8
Աշխատանքի իրավունք	2	12	1	5	1	7
ԸՆԴԱՄԵՆԸ	**62**	**64**	**26**	**29**	**36**	**35**

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



Տեսչական մարմին ներկայացված 29 բողոքից 2 բողոք վերադարձվել է, քննվել է 24-ը, որից՝ 8 բողոք բավարարվել/բեկանվել է (30%), 15 բողոք մերժվել է (62.5%), 1 բողոք կարճվել է, 3 բողոքի քննումը դեռևս ընթացքում է:

2020 թվականին դատական կարգով ներկայացված բողոքները քննության ընթացքում են:

Հաշվետու տարում Տեսչական մարմնի դեմ մինչ հաշվետու տարին ներկայացված բողոքների քննման արդյունքում կայացվել է 36 վճիռ 35 գործով (25 վարչական, 8 վերաքննիչ և 2 վճռաբեկ դատարանների կողմից): Արդյունքում՝ 24 վճիռ կայացվել է ի օգուտ տնտեսավարող սուբյեկտների (66.7%), 11-ը՝ ի օգուտ Տեսչական մարմնի (30.6%), 1 վճռի արդյունքը հայտնի չէ:

Հաշվետու տարում բողոքների թվի էական աճ կամ նվազում չի արձանագրվել՝ նախորդ հաշվետու տարվա համեմատությամբ:

Սակայն հարկ է նշել, որ 2019 թվականի համեմատությամբ անհամեմատ բարձր են հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական աշխատանքները, և այս համատեքստում բողոքների էքստենսիվ ցուցանիշը զգալիորեն ցածր է նախորդ տարվա համեմատությամբ:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

Այսպես. 2018-2020թթ. Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական աշխատանքների և, համապատասխանաբար, Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների հարաբերակցությունը հետևյալն է.

Տարի	Վերահսկողական միջոցառումներ			Բողոքների թիվ	%
	անվանում	քանակ	ընդամենը		
2018	Վարչական վարույթ	208	208	17	8.2
	Ստուգում	0			
	Մշտադիտարկում	0			
	Ստուգայց	0			
	Ընդամենը վերահսկողական միջոցառում	**208**	**208**	**17**	**8.2**
2019	Վարչական վարույթ	1674	1674	62	3.7
	Ստուգում	0			
	Մշտադիտարկում	0			
	Ստուգայց	0			
	Ընդամենը վերահսկողական միջոցառում	**1674**	**1674**	**62**	**3.7**
2020	Վարչական վարույթ	911			
	Ստուգում	85			
	Մշտադիտարկում	22520			
	Ստուգայց	10330	10330	0	0
	Ընդամենը վերահսկողական միջոցառում	**33846**	**33846**	**64**	**0.2**



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am